հաճութեամբ լրութեան ազգիս, զի յօժարեսցի գալ 'ի մայրաքաղաքս Տ. Կիրակոս Ս. Արք Եպիսկոպոսն, ընդ իւր ունելով զմի կամ զերկու խոհական վարդապետս, սակս ընտրութեան Պատրիարքի Ս. Երուսաղէմի՝ խորհրդակցութեամբ միմեանց, բերելով ընդ իւր թէ զանձնական տումար ելից և մտից Զաքարիա Պատրիարքի եւ թէ Ս. Աթոռոյդ, տեսանել զհաշիւն, որպէս գրեալ եմք ինքեան։ Եւ մինչ 'ի վերադարձ Կիրակոսի, Խորհրդական Հարք կառավարեսցեն և հոգասցին զազգս միաբանաց և ուխտաւորաց՝ սիրով շահելով զամենեսեան ըստ իւրաքանչիւրոց արժանաւորութեան, սակայն որպէս և գրեալ եմք նոցին համակամ միաբանութեան. զի զամենայն գիտութեամբ և բարձու հրամանաւ ձեր ունին կատարել զկարեւոր իրողութիւնսն, եւ առանց ինչ ձեր ակնարկութեան մի ինչ արասցեն, որով յուսամք սիրով և խաղաղութեամբ մնալ ամենեցուն՝ մինչեւ 'ի հանդիսանալ միոյ հովուի յաջողութեամբ Տեառն »։

Ցայս գիր ձեռնարկեալ կնքեցին ամենեքեան որք էին 'ի Ժողովին.

Մատթէոս Արքեպիսկոպոս		Մանտեսի Ճանիկ
Պատրիարք Կոստանդինուպօլսոյ։		Մանտեսի Սիմոնեան։
Յարութիւն		Միքայէլ
Մանտեսի Յարութիւնեան։		Փիշմիշեան։
Վ.առ.ողապետ Յովհաննէս		Վ.առ.ողապետ Պօղոս
Տատեան։		Տատեան։
Ճարտարապետ Կարապետ		Ճարտարապետ Յովհաննէս
Գրիգորեան։		Յարութիւնեան։
Պետրոս		Միսաք
Քիւրքճի խանեան։		Միսաքեան։
Մազսուտ		Մանտեսի Յարութիւն
Սարիմեան։		Կելկելեան։
Գէորգ		Պօղոս
Երամեան։		Աշճանեան։
Ցակոբճան		Պետրոս
Միսաքեան։		Խորասանճեան։
Արզուման	Յովհաննէս	Գէորգ
Արզումանեան։	Եազրճեան։	Պարտիզպանեան։